

(Ալաշկերտ), որուն վրայ Պօղոս Երէջ ուրիշ երկու տաղ ալ գրած է. նոյն ձեռ. Թ. 156, Թ. 7. 63ա—65բ:

Կարապետ Արքեպիսկոպոսի այս գրութիւնը «Հայոց նոր վկաները» գրքին մէջ (Վաղարշապատ 1903, էջ 562—567) կը պակսի:

Դ.

Երբ է Կարապետ վարդապետէ Հնձոցոյ:

Կարկամեալ անձամբ սասանիմ,
յաճէ գեհնոյն սարսափիմ,
յահագին աւուրն սարսիմ,
ի քեզ դիմեմ, գերամբիծ Կոյս.
գերամբիծ Կոյս, այց արա՛ գերոյս:

Աւաղ աւուրցն զորս անցուցի.
մեզմ ուսուցչին ոչ անսացի.
դիւս հոգւոյս մտաց հանի.
ի քեզ դիմեմ, գերազւարճ Կոյս.
գերազւարճ Կոյս, այց արա՛ խղճոյս:

Բամեալ չարիքն ողբ են յերկրի.
խմբեալ պարեն պատրանք դիւի.
զոտս ի շաւղացն ոչ սահեցի.
աղատեա զիս աննւաղ Կոյս.
աննւաղ Կոյս, այց արա՛ գերոյս:

Աւաղ գերւոյս որ ոչ ըսգացի.
գործոց բարեաց ոչ անսացի.
զհոգիս նետիւք խոցոտեցի.
բուժեա զվէրս իմ, յարազւարճ Կոյս.
յարազւարճ Կոյս, այց արա՛ գերոյս:

Պատեալ զինեւ զօրք խաւարի,
եւ ոչ տան թոյլ գործեւ զբարի.
խղճուկ հոգիս հարի նետիւ.